



Հարկերի հավաքագրման ընթացքում գործարքային ծախսերի գնահատումը

Տիգրան Չրբաշյան, Դավիթ Հարությունյան

Համառոտագիր

Վերջին մի քանի տարիների ընթացքում հարկային կառավարման բարեփոխումները դասվում են Հայաստանի կառավարության գերակա խնդիրների շարքում: Հարկերի կառավարման կարևոր ոլորտներից մեկը կապված է հարկային պարտավորությունների կատարման խնդիրների հետ, որն արտացոլում է հարկատուների և պետության միջև ծագած փոխհարաբերությունների բոլոր ասպեկտները: Սույն հոդվածը հիմնականում ուղղված է հարկային պարտավորությունների կատարման հետ կապված ծախսերի գնահատման մեթոդաբանությանը և ներկայացնում է փորձարարական տվյալներ՝ ստացված Երևանում հաստատված 306 առևտրային ձեռնարկությունների հարցումից: Հորվածում ներկայացված է հարկերի հավաքագրման վարչական ծախսերի վերլուծությունը և նույն խնդրի շուրջ այլ երկրների հետ համեմատությունները: Վերջինս պատրաստվել է AEPLAC-ի կողմից մշակված հաշվետվության հիման վրա: